# Alt_urban

Քաղաքային պլանավորման և ժառանգության պահպանության խնդիրների վերաբերյալ հեղինակային հոդվածների/հրապարակախոսական տեքստերի մրցույթ

Call for  articles/publications on urban planning and heritage preservation

urbanlab

# Քաղաքային պլանավորում և ժառանգության պահպանում.

Հանրային արժեհամակարգ, հանրային քաղաքականություն, մասնակցային կառավարում

ուրբանլաբ հիմնադրամը, «Ալ_Երևան» նախագծի շրջանակում, Երևանի ժառանգության պաշտպանության կոմիտեի հետ համատեղ, նախաձեռնում է քաղաքային պլանավորման և ժառանգության պահպանության խնդիրների վերաբերյալ հեղինակային հոդվածների / հրապարակախոսական տեքստերի (այսուհետ՝ Տեքստ) մրցութային հայտերի ընդունում:

Նախաձեռնության նպատակն է վերհանել վերջին տասնամյակների քաղաքային զարգացման (քաղաքաշինության) և ժառանգության (պատմաճարտարապետական / պատմական և մշակութային հուշարձանների) պահպանության ոլորտներում առկա խնդիրներն ու ուրվագծել դրանց լուծմանը միտված առաջարկություններ:

Ստորև ներկայացվում են հիմնական ոլորտները, որոնք, սակայն, այսքանով չեն սահմանափակվում և ենթակա են լրացման.

- Քաղաքային պլանավորում (քաղաքաշինություն)
- Ճարտարապետություն
- Քաղաքային միջավայրի ձևավորում
- Հանրային տարածքներ
- Կանաչապատում
- Կենսապատկերի (լանդշաֆտի) ուսումնասիրություն
- Ժառանգության (պատմաճարտարապետական կամ պատմամշակութային հուշարձանների) պահպանություն
- Հուշարձանների վերականգնում և վերօգտագործում

# Urban planning and heritage protection.

Public value system, public policy, participatory governance

Within the framework of the “Alt_Yerevan” project, the urbanlab, jointly with the Committee for the Protection of Yerevan’s Heritage, initiates call for articles / publications (hereinafter referred to as Text) on urban planning and heritage protection.

The aim of the initiative is to identify the existing problems in the fields of urban planning and heritage (historical-architectural / historical and cultural monuments) of recent decades and to outline proposals for their solution.

Below are the main areas later to be updated:

- Urban planning
- Architecture
- Urban design
- Public spaces
- Greening
- Landscape studies
- Historical-architectural or historical-cultural monuments
- Restoration and reuse of heritage sites
- Preservation of historical sites

- Պատմական միջավայրերի պահպանություն
- Մասնակցային կառավարում
- Հանրային կառավարում
- Տարածքային կառավարում
- Սոցիալական բնակարանաշինություն
- Տարածական տվյալների համակարգեր

Հեղինակ(ներ)ից ակնկալվում է ներկայացնել առավելագույնը 5’000 նիշից բաղկացած Տեքստ՝ հայերեն կամ անգլերեն: Այն կարող է ներառել նաև պատկերներ և գծագրեր: Որոշ դեպքերում համամասնությունը կարող է փոխվել եթե պատկերներն ունեն առաջնային կարևորություն:

Ընտրությունը կատարվելու է երկու փուլով. առաջին փուլում՝ մինչև 2020 թվականի մայիսի 15-ը անհրաժեշտ է ներկայացնել կարճ թեզիս՝ առավելագույնը 1’500 նիշ հայերեն կամ անգլերեն՝ ուղարկելով այն office@urbanlab.am էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում նշելով «Alt_urban_Thesis»:

Խմբագրական խորհուրդը, որը բաղկացած է լինելու Երևանի ժառանգության պաշտպանության կոմիտեի անդամներից ընտրելու է ներկայացված թեզիսներից 5-10 առաջարկ, որից հետո հեղինակ(ներ)ի հետ կնքվելու է պայմանագիր՝ Տեքստի ներկայացման համար: Այս փուլի տևողությունը կազմում է 2 ամիս: Յուրաքանչյուր Տեքստի ծախսերի համար նախատեսվում է 100’000 դրամի փոխհատուցում / հոնորար:

Տեքստերը հրատարակվելու են սահմանափակ քանակությամբ և հասանելի են լինելու առցանց տիրույթում:

Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգող Լենա Մաթևոսյանի հետ office@urbanlab.am հասցեով, կամ զանգահարելով +374 11 966868 հեռախոսահամարով:

- Participatory governance
- Public administration
- Territorial administration
- Social housing
- Spatial data systems

The author(s) are expected to submit a text of up to 5'000 characters in Armenian or English. It can include figures and graphs. In some cases, it can be less when visuals have crucial roles in the Text.

The selection will be made in two stages. In the first stage till 15 May 2021, a short thesis will be required, with a maximum of 1'500 characters in Armenian or English. The thesis should be emailed to office@urbanlab.am mentioning “Alt_urban_Thesis” in the subject line.

The jury, consist  of the members of the Committee for the Protection of Yerevan’s Heritage will select 5-10 proposals from the submitted theses, after which a contract will be signed with the Author for the submission of the Text. The duration of this phase is 2 months. Reimbursement / Honorarium 100'000 AMD is envisaged for the costs of each Text.

The texts will be published in limited quantities and will be available online.

For all inquiries, please contact project coordinator Lena Matevosyan both in Armenian and in English by: office@urbanlab.am or call +374 11 966868.